

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
N << ՍԱՊԾ-18/03 >>

ք. Երևան

«25» դեկտեմբերի 2017թ.

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը, ի դեմս ծառայության պետ Իշխան Կարապետյանի, որը գործում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1730-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ստանդարտ Դիալոգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս ընկերությանն տնօրեն Արման Արարատյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն շրջանակային համաձայնագիրը (այսուհետև՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է 2018 թվականի ընթացքում ձեռք բերվելիք լաբորատոր փորձաքննության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն):

1.2 Պայմանագրի միջոցով փորձաքննության ծառայություններ ձեռք բերելու յուրաքանչյուր դեպքում Պատվիրատուի ներկայացուցիչը (տեսուչը) համակարգչային ծրագրի միջոցով՝ պատահական ընտրությամբ, շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներից ընտրում է ընտրված մասնակից և նույն օրը Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 16-ի N 1142-Ն որոշմամբ սահմանված ուղեկցող նամակով՝ (Ձև N 2) պատվիրում է փորձաքննությունը:

1.3. Պայմանագրի 1.2-րդ կետում նշված համակարգչային ծրագիրը կազմվում է գրանցման մասին հայտերի գնահատման արդյունքների հիման վրա («Մասնագիտական փորձառություն», «Տեխնիկական միջոցներ», «Ֆինանսական միջոցներ», «Աշխատանքային ռեսուրսներ»):

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը՝ պայմանագրային հիմունքներով ներգրավելով նաև տվյալ ոլորտում համապատասխան գիտելիքներ և աշխատանքային փորձ ունեցող մասնագետների.

2.1.2 Եթե Պայմանագրի N 1 հավելվածում նշված Ծառայությունը մատուցվել է թերի կամ ոչ պատշաճ.

ա) չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը Պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2-րդ կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3-րդ կետով նախատեսված տույժը,

բ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2-րդ կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) Պայմանագրի N 1 հավելվածում նշված Ծառայությունը մատուցվել է թերի կամ ոչ պատշաճ,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը.

2.1.4. Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե 2.1.1-ին և 2.1.5-րդ կետերում նշված ստուգման արդյունքում հայտնաբերվել է խախտում:

2.1.5. Յուրաքանչյուր եռամսյակը մեկ ստուգել Կատարողի՝ Պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների, օգտագործվող նյութերի առկայությունը, սարքինությունը և ձեռքբերումը հավաստող փաստաթղթերի առկայությունը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5-րդ կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2-րդ կետում նշված ժամկետի խախտման դեպքում Պայմանագրի 5.5-րդ կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Լաբորատոր փորձաքննության ավարտից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում փորձարկման արձանագրության 2 օրինակը ուղարկել Պատվիրատուին՝ կցելով սպեկտրաֆոտոմետրիկ (ֆոտոկոլորիմետրիկ), ատոմասբորբցիոն սպեկտրամետրիկ և քրոմատագրաֆիկ մեթոդների համապատասխան սպեկտրները և քրոմատագրերը:

2.4.3 Յուրաքանչյուր ամիս՝ մինչև հաջորդող ամսվա 10-ը, Պատվիրատուին էլեկտրոնային եղանակով sample@ssfs.am հասցեով ներկայացնել տեղեկատվություն Պայմանագրի շրջանակում իրականացված լաբորատոր փորձաքննությունների քանակի և անհամապատասխանությունների մասին՝ համաձայն ձևի:

2.4.4 Ապահովել Պայմանագրի շրջանակում իրականացված լաբորատոր փորձաքննության արդյունքների երրորդ անձանց համար գաղտնիությունը:

2.4.5 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 5.2-րդ և 5.3-րդ կետերով նախատեսված տույժը և տուգանքը Պատվիրատուի կողմից ծանուցվելուց հետո եռօրյա ժամկետում:

2.4.6 Պայմանագրի (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.7 Պայմանագիր կնքելուց հետո, մասնակցության իրավունքի և (կամ) հրավերով նախատեսված որակավորման չափանիշների նկատմամբ իր հատկանիշների փոփոխության դեպքում, Պատվիրատուին ներկայացնել Պայմանագիրը դադարեցնելու մասին դիմում:

2.4.8 Պայմանագրի 2.4.4-րդ կետի պահանջները չկատարելու, ինչպես նաև պայմանագիր կնքելուց հրաժարվելու կամ պայմանագիր կնքելու իրավունքից զրկվելու դեպքում Պատվիրատուի համապատասխան ծանուցումն ստանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում վերջինիս վճարել հայտի ապահովման չափով գումար (մեկ միլիոն ՀՀ դրամ):

2.4.9. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 16-ի N 1142-Ն որոշմամբ սահմանված փորձարկման արձանագրությունը (Ձև N6) ստորագրելու իրավասու անձանց (Կատարողի ղեկավար, պատասխանատու կատարողներ) փոփոխության դեպքում մեկ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր հայտնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Պայմանագրի կատարման արդյունքն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման ակտի (այսուհետ՝ Ակտ) ստորագրմամբ:

Կատարողը Ծառայության մատուցման ընթացիկ ամսվա վերջին աշխատանքային օրը Պատվիրատուին է հանձնում տվյալ ամսվա ընթացքում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված Ակտի 2 օրինակ:

3.2. Ակտը ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, Ակտը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3. Պատվիրատուն Ակտը ստանալու պահից տասը աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված Ակտի մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը, ներառյալ ԱԱՀ-ն ըստ լաբորատոր փորձաքննության տեսակների հաստատված է ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2017 թվականի հոկտեմբերի 13-ի N 832-Ն հրամանով: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, այդ թվում՝ հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2. Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է Ակտի հիման վրա՝ Պատվիրատուի կողմից Ակտն ստորագրելու օրվանից մեկ ամսվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ Պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2. Պայմանագրի պայմաններին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3. Պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝

մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4. Պայմանագրի 5.2-րդ և 5.3-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5. Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2-րդ կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում, եթե փորձաքննության վճարը փոխանցվել է Պատվիրատուի հատուկ հաշվին՝ համաձայն «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի, Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը կողմերին չի ազատում իրենց՝ Պայմանագրով սահմանված պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1. Պայմանագրով և Պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն շրջանակային համաձայնագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից՝ յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

7.3. Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Պայմանագրով նախատեսված Ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

7.4. Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են ձեռք բերվող Ծառայության ծավալների գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

7.5. Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.7. Պայմանագիրը կազմված է 28 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

7.8. Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.9. Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պ ա տ վ ի Ր ա տ ու

ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության
պետական ծառայություն
ք.Երևան, Կոմիտաս 49/2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011404026
ՀՎՀՀ 00454227
Իշխան Կարապետյան



(ստորագրություն)

Կ.Տ.

Կ ա տ ա Ր Ո Ղ

«Ստանդարտ դիալոգ» ՍՊԸ
ք.Երևան, Կոմիտաս 49/4
«Ինտելիգենսկ» ՓԲԸ
ՀՀ 2052022118061001
ՀՎՀՀ 00099876
Արման Արարատյան



(ստորագրություն)

Կ.Տ.

Ց Ա Ն Կ
ՄԱՏՈՒՑՎՈՂ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Փորձաքննության ենթակա ցուցանիշը		Փորձարկման սարքավորումը կամ միջոցը	Փորձաքննության արժեքը (ներառյալ ԱԱՀ) ՀՀ դրամ
Թունավոր տարրեր և նյութեր	Կապար	Ատոմաբսորբցիոն սպեկտրասկոպ	7000
	Արսեն	Ատոմաբսորբցիոն սպեկտրասկոպ	7000
	Կադմիում	Ատոմաբսորբցիոն սպեկտրասկոպ	7000
	Սնդիկ	Ատոմաբսորբցիոն սպեկտրասկոպ	7000
	Պղինձ	Ատոմաբսորբցիոն սպեկտրասկոպ	7000
	Երկաթ	Ատոմաբսորբցիոն սպեկտրասկոպ	7000
	Նիկել	Ատոմաբսորբցիոն սպեկտրասկոպ	7000
	Քրոմ	Ատոմաբսորբցիոն սպեկտրասկոպ	7000
	Անագ	Ատոմաբսորբցիոն սպեկտրասկոպ	7000
	Սելեն	Ատոմաբսորբցիոն սպեկտրասկոպ	7000
	Ծարիր	Ատոմաբսորբցիոն սպեկտրասկոպ	7000
	Բարիում	Ատոմաբսորբցիոն սպեկտրասկոպ	7000
	Մոլիբդեն	Ատոմաբսորբցիոն սպեկտրասկոպ	7000
	Բերիլիում	Ատոմաբսորբցիոն սպեկտրասկոպ	7000
	Մանգան	Ատոմաբսորբցիոն սպեկտրասկոպ	7000
	Ալյումինիում	Ատոմաբսորբցիոն սպեկտրասկոպ	7000
	Ցինկ	Ատոմաբսորբցիոն սպեկտրասկոպ	7000
	Կալցիում	Ատոմաբսորբցիոն սպեկտրասկոպ	7000

	Նատրիում	Ատոմաբարոբեցիոն սպեկտրասկոպ	7000
	Կալիում	Ատոմաբարոբեցիոն սպեկտրասկոպ	7000
	Մագնեզիում	Ատոմաբարոբեցիոն սպեկտրասկոպ	7000
	Վանադիում	Ատոմաբարոբեցիոն սպեկտրասկոպ	7000
Ռադիոնուկլիդներ	Ցեզիում 137	Ռադիոմետր	7200
	Ստրոնցիում 90	Ռադիոմետր	7200
	Ընդհանուր ճառագայթաակտիվություն	Ռադիոմետր	7200
	Ուրան	Ռադիոմետր	7200
	Ռադիում	Ռադիոմետր	7200
	Յոդ	Ռադիոմետր	7200
	Պլուտոնիում	Ռադիոմետր	7200
	Ամերիցիում	Ռադիոմետր	7200
Միկրոտոքսիններ	Աֆլատոքսին Մ1	Հեղուկային քրոմատագրաֆ	18000
	Աֆլատոքսին Բ1	Հեղուկային քրոմատագրաֆ	18000
	Դեզոքսինիվալենոլ	Հեղուկային քրոմատագրաֆ	18000
	Ջեարալենոն	Հեղուկային քրոմատագրաֆ	18000
	S-2 տոքսին	Հեղուկային քրոմատագրաֆ	18000
	Օքրատոքսին Ա	Հեղուկային քրոմատագրաֆ	18000
	Պատուլին	Հեղուկային քրոմատագրաֆ	18000
Նիտրոզամիններ	ՆԴՄԱ և ՆԴԵԱ գումար	Հեղուկային քրոմատագրաֆ	18000
Հակաբիոտիկներ	Լևոմիցիտին	Հեղուկային քրոմատագրաֆ	15000

	Տետրացիկլինի խումբ	Համապատասխան ախտորոշիչ հավաքածուներ մանրէական աճեցվածքների կիրառմամբ	5000
		Հեղուկային քրոմատագրաֆ	15000
	Ստրեպտոմիցին	Համապատասխան ախտորոշիչ հավաքածուներ մանրէական աճեցվածքների կիրառմամբ	5000
		Հեղուկային քրոմատագրաֆ	15000
	Պենիցիլին	Համապատասխան ախտորոշիչ հավաքածուներ մանրէական աճեցվածքների կիրառմամբ	5000
		Հեղուկային քրոմատագրաֆ	15000
	Ֆեֆալուպորիններ	Հեղուկային քրոմատագրաֆ մասս սպեկտրամետր	18000
	Խինոլոններ	Հեղուկային քրոմատագրաֆ մասս սպեկտրամետր	18000
	Մակրոլիդներ	Հեղուկային քրոմատագրաֆ մասս սպեկտրամետր	18000
	Պլկրոմուտիլիններ	Հեղուկային քրոմատագրաֆ մասս սպեկտրամետր	18000
	Լինկոսամիդներ	Հեղուկային քրոմատագրաֆ մասս սպեկտրամետր	18000
	Ամինոգլիկոզիդներ	Հեղուկային քրոմատագրաֆ մասս սպեկտրամետր	18000
Պեստիցիդներ	ՀՔՅՀ (իզոմերների գումար)	Գազային քրոմատագրաֆ մասս սպեկտրամետր	15000

	ԴԴՏ և նրա մետաբոլիտներ	Գազային քրոմատագրաֆ մասս սպեկտրամետր	15000
	Հեքսաքլորբենզոլ	Գազային քրոմատագրաֆ մասս սպեկտրամետր	15000
	Սնդիկորգանական պեստիցիդներ	Գազային քրոմատագրաֆ մասս սպեկտրամետր	15000
	Քլորորգանական պեստիցիդներ	Գազային քրոմատագրաֆ մասս սպեկտրամետր	15000
	Ֆոսֆորորգանական պեստիցիդներ	Գազային քրոմատագրաֆ մասս սպեկտրամետր	15000
	2, 4-Դ թթու, դրա աղերը, եթերները	Գազային քրոմատագրաֆ մասս սպեկտրամետր	15000
	Պեստիցիդներ	Գազային քրոմատագրաֆ մասս սպեկտրամետր	15000
Սննդային հավելումներ	E-102 Տարտրազին	Հեղուկային քրոմատագրաֆ	20000
	E-122 Ազոբուբին	Հեղուկային քրոմատագրաֆ	20000
	E-124 Պոնսո 4R	Հեղուկային քրոմատագրաֆ	20000
	E-110 Դեղին մայրամուտ	Հեղուկային քրոմատագրաֆ	20000
	E-132 Ինդիգո-կարմին	Հեղուկային քրոմատագրաֆ	20000
	E-200 Սորբինա-թթու	Հեղուկային քրոմատագրաֆ	20000
	E-201 Նատրիումի սորբատ	Հեղուկային քրոմատագրաֆ	20000
	E-202 Կալիումի սորբատ	Հեղուկային քրոմատագրաֆ	20000
	E-203 Կալցիումի սորբատ	Հեղուկային քրոմատագրաֆ	20000
	E-210 Բենզոյաթթու	Հեղուկային քրոմատագրաֆ	20000
	E-211 Նատրիումի բենզատ	Հեղուկային քրոմատագրաֆ	20000
	E-212 Կալիումի բենզատ	Հեղուկային քրոմատագրաֆ	20000
	E-213 Կալցիումի բենզատ	Հեղուկային	20000

Մեղսբուհի Կյանք		քրոմատագրաֆ	
	E-270 Կաթնաթթու	Հեղուկային քրոմատագրաֆ	20000
	E-280 Պրոպիոնաթթու	Հեղուկային քրոմատագրաֆ	20000
	E-281 Նատրիումի Պռոպիոնատ	Հեղուկային քրոմատագրաֆ	20000
	E-282 Կալցիումի պռոպիոնատ	Հեղուկային քրոմատագրաֆ	20000
	E-296 Խնձորաթթու	Հեղուկային քրոմատագրաֆ	20000
	E-300 Ասկորբինաթթու	Հեղուկային քրոմատագրաֆ	20000
	E-301 Նատրիումի ասկորբատ	Հեղուկային քրոմատագրաֆ	20000
	E-302 Կալիումի ասկորբատ	Հեղուկային քրոմատագրաֆ	20000
	E-303 Կալցիումի ասկորբատ	Հեղուկային քրոմատագրաֆ	20000
	E-330 Կիտրոնաթթու	Հեղուկային քրոմատագրաֆ	20000
	E-334 Գինեթթու	Հեղուկային քրոմատագրաֆ	20000
	E-420 Սորբիտ	Հեղուկային քրոմատագրաֆ	20000
	E-575 Գլյուկոնոդեխտալակտոն	Հեղուկային քրոմատագրաֆ	20000
	E-620 Գլյուտամինաթթու	Հեղուկային քրոմատագրաֆ	20000
	E-951 Ասպարտամ	Հեղուկային քրոմատագրաֆ	20000
	E-954 Սախարին	Հեղուկային քրոմատագրաֆ	20000
	E-967 Քսիլիտ	Հեղուկային քրոմատագրաֆ	20000
	Կոնսերվանտներ	Հեղուկային քրոմատագրաֆ	20000
	Էմուլգատորներ	Հեղուկային քրոմատագրաֆ	20000
Ստիլբեններ	Հեղուկային քրոմատագրաֆ մասս սպեկտրամետր	18000	
Ստերոիդներ	Հեղուկային քրոմատագրաֆ մասս սպեկտրամետր	18000	
Բետաազոնիստներ	Հեղուկային	18000	

Մնացորդային նյութեր		քրոմատագրաֆ մասս սպեկտրամետր	
	Հակաճիճվային դեղանյութեր	Հեղուկային քրոմատագրաֆ մասս սպեկտրամետր	24000
	Ոչ ստերոիդային հակաբորբոքային դեղանյութեր	Հեղուկային քրոմատագրաֆ մասս սպեկտրամետր	24000
	Քինոլիններ	Հեղուկային քրոմատագրաֆ մասս սպեկտրամետր	24000
	Ամինոգլիկոզիդներ	Հեղուկային քրոմատագրաֆ մասս սպեկտրամետր	24000
	Անաբոլիկ ստերոիդներ և ստիլբենի ածանցյալներ (մեկ ցուցանիշը)	Գազային քրոմատագրաֆ մասս սպեկտրամետր	24000
	Թիրեոստատներ	Հեղուկային քրոմատագրաֆ մասս սպեկտրամետր	18000
	Ֆենոլային միացություններ	Հեղուկային քրոմատագրաֆ	18000
	Ֆուրանային միացություններ	Հեղուկային քրոմատագրաֆ	20000
	Սինթետիկ ներկանյութեր (մեկ ցուցանիշը)	Հեղուկային քրոմատագրաֆ	20000
	Նիտրոֆուրաններ	Հեղուկային քրոմատագրաֆ մասս սպեկտրամետր	24000
	Ստիլբեստրոլ	Հեղուկային քրոմատագրաֆ մասս սպեկտրամետր	18000
Մանրէաբանական ցուցանիշներ	ՄԱՖԱՄ	Համապատասխան ախտորոշիչ հավաքածուներ մանրէական աճեցվածքների կիրառմամբ	5000
	ԱՅԽՄ	Համապատասխան ախտորոշիչ հավաքածուներ մանրէական աճեցվածքների կիրառմամբ	5000
	Աղիքային ցուպիկ (E. coli)	Համապատասխան ախտորոշիչ հավաքածուներ մանրէական	5000

		աճեցվածքների կիրառմամբ	
	Բացիլիուս Յեռեուս (Bacillus cereus)	Համապատասխան ախտորոշիչ հավաքածուներ մանրէական աճեցվածքների կիրառմամբ	5000
	Սուլֆիտ վերականգնող կլոստրիդիաններ	Համապատասխան ախտորոշիչ հավաքածուներ մանրէական աճեցվածքների կիրառմամբ	5000
	Ոսկեգույն ստաֆիլակոկ	Համապատասխան ախտորոշիչ հավաքածուներ մանրէական աճեցվածքների կիրառմամբ	5000
	Ախտածին՝ այդ թվում սալմոնելաներ	Համապատասխան ախտորոշիչ հավաքածուներ մանրէական աճեցվածքների կիրառմամբ	5000
	Բորբոսասնկեր	Համապատասխան ախտորոշիչ հավաքածուներ մանրէական աճեցվածքների կիրառմամբ	5000
	Խմորասնկեր	Համապատասխան ախտորոշիչ հավաքածուներ մանրէական աճեցվածքների կիրառմամբ	5000
	Լիստերիա (L. monocytogenes)	Համապատասխան ախտորոշիչ հավաքածուներ մանրէական աճեցվածքների կիրառմամբ	5000
	Էնտերոկոկ	Համապատասխան ախտորոշիչ հավաքածուներ մանրէական աճեցվածքների	5000

	կիրառմամբ	
Կլոստրիդիում բոտուլինում	Համապատասխան ախտորոշիչ հավաքածուներ մանրէական աճեցվածքների կիրառմամբ	5000
Ջերմատուլերանտ կոլի ձևեր	Համապատասխան ախտորոշիչ հավաքածուներ մանրէական աճեցվածքների կիրառմամբ	5000
Ֆեկալ ստրեպտոկոկեր		5000
Պսևդոմոնաս աերուգինոզա (Pseudomonas aeruginosa)	Համապատասխան ախտորոշիչ հավաքածուներ մանրէական աճեցվածքների կիրառմամբ	5000
Կլոստրիդիում պերֆրինգենս (Cl. Perfringenes, Cl. Botulinum, Cl. haemolyticus)	Համապատասխան ախտորոշիչ հավաքածուներ մանրէական աճեցվածքների կիրառմամբ	5000
Պրոտեուս	Համապատասխան ախտորոշիչ հավաքածուներ մանրէական աճեցվածքների կիրառմամբ	5000
Կաթնաթթվային մանրէների քանակ	Համապատասխան ախտորոշիչ հավաքածուներ մանրէական աճեցվածքների կիրառմամբ	5000
Բիֆիդոբակտերիաներ	Համապատասխան ախտորոշիչ հավաքածուներ մանրէական աճեցվածքների կիրառմամբ	5 000
Սպոր առաջացնող մեզոֆիլ աերոբ և ֆակուլտատիվ անաերոբ մանրէներ (Bacillus cereus)	Համապատասխան ախտորոշիչ հավաքածուներ մանրէական	5000

	աճեցվածքների կիրառմամբ	
Սպոր առաջացնող մեզոֆիլ աերոբ և ֆակուլտատիվ անաերոբ մանրէներ (Bacillus subtilis)	Համապատասխան ախտորոշիչ հավաքածուներ մանրէական աճեցվածքների կիրառմամբ	5000
Սպոր առաջացնող թերմոֆիլ անաերոբ, աերոբ և ֆակուլտատիվ անաերոբ մանրէներ	Համապատասխան ախտորոշիչ հավաքածուներ մանրէական աճեցվածքների կիրառմամբ	5000
Սպոր չառաջացնող մանրէներ և /կամ բորբոսասնկեր կամ խմորասնկեր	Համապատասխան ախտորոշիչ հավաքածուներ մանրէական աճեցվածքների կիրառմամբ	5000
Բորբոսասնկեր, խմորասնկեր կաթնաթթվային մանրէներ	Համապատասխան ախտորոշիչ հավաքածուներ մանրէական աճեցվածքների կիրառմամբ	5000
Մեզոֆիլ կլոստրիդիաներ	Համապատասխան ախտորոշիչ հավաքածուներ մանրէական աճեցվածքների կիրառմամբ	5000
Վիբրիոն պարահեմոլիտիկուս (Vibrio parahaemolyticus)	Համապատասխան ախտորոշիչ հավաքածուներ մանրէական աճեցվածքների կիրառմամբ	5000
Պրոտեոուս խմբի մանրէներ	Համապատասխան ախտորոշիչ հավաքածուներ մանրէական աճեցվածքների կիրառմամբ	5000
Պսիխրոտորոֆ մանրէներ	Համապատասխան ախտորոշիչ հավաքածուներ մանրէական աճեցվածքների	5000

		կիրառմամբ	
	Կամպիլոբակտերիաներ	Համապատասխան ախտորոշիչ հավաքածուներ մանրէական աճեցվածքների կիրառմամբ	5000
	Իերսինիաներ	Համապատասխան ախտորոշիչ հավաքածուներ մանրէական աճեցվածքների կիրառմամբ	5000
	Էնտերոբակտեր սակազակի (Enterobacter sakazakii)	Համապատասխան ախտորոշիչ հավաքածուներ մանրէական աճեցվածքների կիրառմամբ	5000
	Սոմատիկ բջիջների քանակ	Համապատասխան ախտորոշիչ հավաքածուներ մանրէական աճեցվածքների կիրառմամբ	5000
	Մեզոֆիլ անաէրոբ բակտերիաների սպորներ	Համապատասխան ախտորոշիչ հավաքածուներ մանրէական աճեցվածքների կիրառմամբ	5000
	Էնտերոբակտեր ընտանիքի մանրէներ	Համապատասխան ախտորոշիչ հավաքածուներ մանրէական աճեցվածքների կիրառմամբ	5000
	Շիգելա ցեղի մանրէներ	Համապատասխան ախտորոշիչ հավաքածուներ մանրէական աճեցվածքների կիրառմամբ	5000
Մանրէաբանություն (մեկ ցուցանիշը)		Արագացված մեթոդաբանությամբ	10000
Նույնականացում	Կարագ	Գազային քրոմատագրաֆ	21000
	Մարգարին	Գազային	21000

		քրոմատագրաֆ	
	Սպրեդ	Գազային քրոմատագրաֆ	21000
	Կաթի փոշու առկայությունը կաթնամթերքում	ԻՍՕ 18329:2004	21600
Ֆիզիկաքիմիկան ցուցանիշներ	Մեխանիկական խառնուրդների, խմորման նշանների որոշում	Դիտողական	3000
	Պնդեցման ջերմաստիճանի որոշում	Ջերմային (ջերմաչափ)	3000
	Գույնի որոշում	Քիմիական, տեսողական	3000
	Պղտորության որոշում	Քիմիական, տեսողական	3000
	Հալման ջերմաստիճանի որոշում	Ջերմային (ջերմաչափ)	3000
	Հանքային նյութերի որոշում	Դիտողական	3000
	Օքսիմեթիլֆուրֆուրոլի որոշում (որակական)	Քիմիական	7800
	Աղացվածքի խոշորության որոշում	Կշռային, լաբորատոր մաղեր	3000
	Մետաղամագնիսական խառնուրդներ	Դիտողական, մագնիս	3000
	Զանգվածի կորստի որոշում	Կշռային	3000
	Բարորակ, փչացած, դեղնած միջուկի պարունակություն, միջուկի խոշորություն	Դիտողական	3000
	Լցոնած պտղի քանակի որոշում	Կշռային	3000
	Աղբախառնուկների պարունակություն	Դիտողական	3000
	Ալրային մասի պարունակություն	Կշռային, լաբորատոր մաղեր	3000
	Այլ բույսերի սերմերի պարունակություն	Դիտողական	3000
	Օճառ (որակական)	Քիմիական	3000
	Ըմպելիքի կայունություն	Դիտողական	3000
	Լցման մակարդակ	Ծավալաչափական	3000
	Կարամելային նմուշի ջերմաստիճան	Ջերմային (ջերմային)	3000
	Տիտրվող աղաթթվի ծավալային մաս	Տիտրում	3000
Բեկման ցուցիչ	Ռեֆրակտոմետր	3000	
Փրփուրի բարձրություն	Դիտողական	3000	

Փրփուրի կայունություն	Դիտողական	3000
Թքվելիություն	Կշռային	3000
Պտղամսի որոշում	Կշռային	3000
Նեկտարում հյութի և խյուսի նվազագույն ծավալային մաս	Կշռային	3000
Կայունություն	Դիտողական	3000
Եփվածության որոշում	Դիտողական	3000
Էլեկտրական ջերմահաղորդականությու ն	Կոնդուկտոմետր	3000
Ընդհանուր կոշտություն	Տիտրացիա	3000
Ճարպի ամրության որոշում	Քիմիական	3000
Կեղծվածության որոշում՝ բուսական յուղով (որակական)	Քիմիական	3000
Արգանակում սպիտակուցների առաջնային տրոհման մթերքների որոշում (պղնձարջասպի փորձ)	Քիմիական	3000
Ֆորմալինային փորձ	Քիմիական	3000
Ջրածնային ցուցիչի (pH) որոշում	pH-մետր	3000
Թթվության որոշում	Տիտրում	3000
Պերօքսիդային թվի որոշում	Տիտրում	3000
Մաքրության աստիճան	Ֆիլտրում և դիտում	3000
Կրծաբորբի հայտնաբերում	Քիմիական	3000
Լուծելիություն	Քիմիական	3000
Կաթի տեսակարար կշռի որոշում	Լակտոդենսիտոմետր	3000
Էմուլսիայի կայունության որոշում	Քիմիական	3000
Ծծմբաջրածնի որոշում	Քիմիական	3000
Ռեդուկտազայի որոշում	Քիմիական	3000
Տրի մեթիլ ամինի որոշում	Տիտրում	3000
Օճառացման թվի որոշում	Տիտրում	3000
Դիաստազայի թվի որոշում	Քիմիական	3000
Թթվածնի բիոքիմիական պահանջի որոշում	Տիտրում	3000
Մակերևութային ակտիվ նյութերի որոշում	Քիմիական	3000
Մետասիլիկաթթվի որոշում	Քիմիական, տիտրացիա	3000
Հիմնայնություն	Տիտրացիա	3000

Նավթամթերքների որոշում	Քիմիական	3000
Կողմնակի խառնուրդների և վնասատուների որոշում	Դիտողական մանրադիտակ	3000
	Կշռային	1500
Կալցիումի, Մագնեզիումի, Կալիումի իոններ (մեկ ցուցանիշը)	Տիտրում	3000
Նմուշի օքսիդացում	Տիտրում	3000
Այլ տեսակի օսլայի խառնուրդներ	Տիտրում	3000
Ոչ ճարպային խառնուրդներ		3000
Հացի վնասատուներով վարակվածություն	Դիտողական, մանրադիտակ	3000
Հանքայնացում կամ չոր մնացորդ	Կշռային	3000
Նատրիումի եռուլֆատ	Տիտրում	3000
Ալդեհիդների որոշում	Քիմիական	3000
Պերօքսիդազայի փորձ	Քիմիական	3000
Ամոնիումի աղերի որոշում	Քիմիական	3000
Պաստերիզացիայի որակի ստուգում (Ֆոսֆատազայի որոշում)	Տիտրում	3000
Սպրեդներում ճարպային ֆազի որոշում	Քիմիական	3000
Կեղծվածության որոշում (սողա, ամիակ, ջրածնի պերօքսիդ)	Քիմիական	3000
Մածուցիկություն	Վիսկոզիմետր	3000
Յոդային թվի որոշում	Տիտրում	3000
Անջատված ճարպի կայունության որոշում	Քիմիական	3000
Պեկտինային նյութերի որոշում	Տիտրում	4000
Սուլֆիտների որոշում	Կշռային	1500
Պրովինի որոշում	Սպեկտրաֆոտոմետրիկ	7000
Ջրում չլուծվող չոր նյութերի որոշում	Կշռային	1500
Հարաբերական խտություն	Կշռային	1500
Սպիրտների, նախնական քաղցում իրական էքստրակտի որոշում և նախնական քաղցույում չոր նյութերի հաշվարկ (մեկ ցուցանիշը)	Թորում, կշռային ռեֆրակտոմետր	8000
Ֆերոխառնուկների	Կշռային	1500

որոշում		
Կրճատող նյութեր	Կշռային	1500
Հատիկաչափական կազմի որոշում	Կշռային	1500
Հում բջջանյութ	Կշռային	5000
Մշակված ձկնատեսակների բուֆերայնության որոշում	Տիտրում	4000
Ձկան պահածոյում յուղի մեջ նստվածքի որոշում	Կշռային	1500
Բրոմաթթվի, բորաթթվի, բենզոլթթվի որոշում (մեկ ցուցանիշը)	Տիտրում, սպեկտրաֆոտոմետր	11000
Ամինային ազոտի որոշում	Տիտրում	4000
Դոմոլթթվի որոշում	Սպեկտրաֆոտոմետր	7000
Սպիտակուցային զանգվածում ջրածնի գերօքսիդի որոշում	Տիտրում	7000
Կալցիումի կարբոնատի որոշում	Տիտրում	4000
Ընդհանուր ազոտի որոշում	Էլեմենտային անալիզատոր	8000
Կարբոնատային կոշտության որոշում	Տիտրում	4000
Ակտիվ քլորի (ազատ և կապված) մնացորդային քանակության որոշում	Տիտրում	4000
Մակերևութային ակտիվ նյութերի որոշում	Սպեկտրաֆոտոմետր	7000
Կարբոնատի և քիկարբոնատի որոշում	Տիտրում	4000
Ցնդող հալոգեն օրգանական միացությունների որոշում	Գազային քրոմատոգրամասս դետեկտոր	20000

Պոլիֆոսֆատների որոշում	Սպեկտոֆոտոմետր	7000
Քլորոֆորմի, բրոմֆորմի, երկբրոմքլորմեթանի, բրոմ երկքլորմեթանի, չորսքլորային ածխաջրածինների որոշում (մեկ ցուցանիշը)	Գազային քրոմատագիր մասս դետեկտոր	20000
Քլորօրգանական ինսեկտիցիդների, պոլիքլորացված բիֆենիլների և քլորբենզոլների որոշում	Գազային քրոմատագիր մասս դետեկտոր	20000
Էթիլ սպիրտի ծավալային մաս	Թորում, աէրոմետր	3000
Ցնդող հիմքեր, ազոտ	Թորում, տիտրացիա	3000
Նատրիումի բենզոատ	Տիտրում	3000
Ուրոտրոպին	Տիտրում	3000
Սոսնձանյութ, քանակական	Կշռային	3000
Գինեթթվի որոշում	Տիտրում	3000
Կարոտինի որոշում	Սպեկտրաֆոտոմետր	7000
Օրգանական թթուներ (մեկ ցուցանիշը)	Հեղուկային քրոմատագրաֆ	18000
	Գազային քրոմատագրաֆ, մասս դետեկտոր	20000
Ֆորմոլային թիվ	Տիտրացիա	3000
Օքսիմեթիլֆուրֆուրոլի որոշում (քանակական)	Ֆոտոէլեկտրոկոլորիմետր	6000
Ֆուրֆուրոլի զանգվածամաս	Քիմիական	3000
	Սպեկտրաֆոտոմետր	7000
Ֆոսֆորի զանգվածային մաս	Կշռային	3000
	Սպեկտրաֆոտոմետր	7000
Բաղադրիչների զանգվածային մաս	Կշռային	3000
Օսլայի զանգվածային մաս (որակական)	Քիմիական	3000
Թթուների զանգվածային մաս	Տիտրում	3000
Մրգահյութի զանգվածային մասի որոշում	Կշռային (ցենտրիֆուգ)	3000
Զրալուծ էքստրակտիվ նյութերի զանգվածամաս	Կշռային	3000

Ընդհանուր կաթնաթթվի զանգվածային մաս	Տիտրում	3000
Օրգանական թթուների զանգվածային մաս	Թորում, տիտրացիա	3000
Տանինի զանգվածային մաս	Տիտրում	3000
Չոր նյութերի զանգվածային մաս	Կշռային	3000
Ճարպի կամ յուղի զանգվածային մաս	Բուտիրոմետրիկ, կշռային	3000
Յուղազերծ նյութում խոնավության զանգվածային մաս	կշռային	3000
Չոր նյութում յուղի զանգվածային մաս	Բուտիրոմետրիկ, կշռային	3000
Չոր անյուղ կաթնային մնացորդի զանգվածային մաս	Բուտիրոմետրիկ, կշռային	3000
Սախարոզայի զանգվածային մաս	Տիտրում /Ֆոտոէլեկտրոկոլորիմե տր	6000
Ազատ հանքային թթուների զանգվածամաս	Տիտրացիա	3000
Սպիտակուցի զանգվածային մաս	Կելլալ	6000
Նիտրատների զանգվածային մաս	Ֆոտոէլեկտրոկոլորիմե տր	6000
Շաքարների զանգվածամաս	Տիտրում	6000
Ածխաջրերերի զանգվածային մաս	Տիտրում	6000
Կատիոններ՝ մեկ ցուցանիշը (կալիում, նատրիում, կալցիում, մագնեզիում, ստրոնցիում, ամոնիում և այլն)	Իոնային քրոմատագրաֆ	8000
Անիոններ՝ մեկ ցուցանիշը (ֆտորիդ, քլորիդ, նիտրատ, նիտրիտ, սուլֆատ, ֆոսֆատ և այլն)	Իոնային քրոմատագրաֆ	8000
Մոխրի զանգվածային մաս	Կշռային	3000
Վերականգնվող շաքարների զանգվածային մաս	Տիտրում	3000

Ընդհանուր էքստրակտի զանգվածամաս	Կշռային, պիկնոմետր	3000
Չօճառացվող նյութերի զանգվածային մաս	Քիմիական	3000
	Կշռային	1500
Դեֆորմացված մակարոնի զանգվածամաս	Դիտողական	3000
Հիդրոկարբոնատ իոնների զանգվածամաս	Տիտրում	3000
Լուծվող չոր նյութերի զանգվածամաս	Ռեֆրակտոմետր	3000
Ջարդոնի զանգվածամաս	Դիտողական	3000
Եթերային յուղերի զանգվածային մաս	Թորում, տիտրում	3000
Ածխածնի երկօքսիդի զանգվածային մաս	Քիմիական Մանոմետր, աֆրոմետր	3000
Կերակրի աղի զանգվածային մաս	Տիտրում	3000
Քլորիդների զանգվածային մաս	Տիտրում	3000
Նիտրիտի զանգվածային մաս	Իոնային քրոմատագրաֆ	7200
Ամոնիակի զանգվածային մաս	Քիմիական	3000
	Ֆոտոէլեկտրոկլորիմե տր	
Լուծելի և անլուծելի մոխրի զանգվածային մաս	Կշռային	3000
Նստվածքի զանգվածային մաս	Կշռային	3000
Կոֆեինի զանգվածային մաս	Ֆոտոէլեկտրոկլորիմե տր	3000
Սորբինաթթվի զանգվածային մաս	Ֆոտոէլեկտրոկլորիմե տր	3000
Ալդեհիդների զանգվածամաս	Տիտրում	3000
Սիվուխային յուղերի զանգվածամաս	Տիտրում	3000
Եթերների զանգվածամաս	Տիտրում	3000
Ազատ թթուների զանգվածամաս	Տիտրում	3000
Վնասված մակերեսի զանգվածային մասի որոշում	Դիտողական	3000
Խոնավության զանգվածային մաս	Կշռային	3000
Բարձր սպիրտների զանգվածային մաս	Թորում, Տիտրում	3000
	Գազային քրոմատագրաֆ	18000

	Միջին եթերների զանգվածամաս	Թորում, Տիտրում	3000
	Ցնդող ճարպաթթուների զանգվածամաս	Թորում, Տիտրում	3000
	Աղաթթվում չլուծվող մոխրի զանգվածամաս	Կշռային	3000
	Յոդի զանգվածամաս	Տիտրում	3000
	Օսլայի զանգվածային մաս (քանակական)	Տիտրում	3000
	Ազատ ճարպաթթուների զանգվածային մաս	Տիտրում	3000
	Փշրանքի զանգվածամաս	Կշռային	3000
	Մանրուքի զանգվածային մաս	Կշռային	3000
	Ծծմբային թթվի կամ ծծմբի երկօքսիդի զանգվածային մաս	Տիտրում	3000
	Հում թաղանթանյութի զանգվածամաս	Ֆոտոէլեկտրոկոլորիմե տր	3000
	Ֆորմալդեհիդ	Գազ-հեղուկային քրոմատագրաֆ	15000
	Ստիրոլ	Գազ-հեղուկային քրոմատագրաֆ	15000
	Վինիլքլորիդ	Գազ-հեղուկային քրոմատագրաֆ	15000
	Մեթիլմեն ակրիլատ	Գազ-հեղուկային քրոմատագրաֆ	15000
	E-կապրուլակտամ	Գազ-հեղուկային քրոմատագրաֆ	15000
	Ացետալդեհիդ	Գազ-հեղուկային քրոմատագրաֆ	15000
	Ֆտալատներ	Գազային քրոմատագրաֆ մասս դետեկտոր	25000
	Ձվադիտում	Ձվադիտակ (օվոսկոպ)	3000

Սիվուխային յուղեր	Գազային քրոմատագրաֆ	18000
Քացախաթթվի ալդեհիդ	Գազային քրոմատագրաֆ	18000
Կոֆեին	Հեղուկային քրոմատագրաֆ	18000
Բարդ էթերներ	Գազային քրոմատագրաֆ	18000
Ցնդող թթուներ	Գազային քրոմատագրաֆ	18000
Ֆուրֆուրոլ	Գազային քրոմատագրաֆ	18000
Էրուկաթթու	Գազային քրոմատագրաֆ	18000
Վիտամիններ (մեկ ցուցանիշը)	Հեղուկային քրոմատագրաֆ	18000
Բենզապիրեն	Հեղուկային քրոմատագրաֆ	21000
Մելամին	Հեղուկայինային քրոմատագրաֆ	18000
Հիստամին	Հեղուկային քրոմատագրաֆ	20000
Ֆուլաթթու	Հեղուկային քրոմատագրաֆ	18000
Սախարոզ	Հեղուկային քրոմատագրաֆ	18000
Գլյուկոզ	Հեղուկային քրոմատագրաֆ	18000
Ֆրուկտոզ	Հեղուկային քրոմատագրաֆ	18000
Օդու և սպիրտային խմիչքների իսկության որոշում (իզոտոպային)	Գազային քրոմատագրաֆ	20000
Մեթիլ սպիրտ	Գազային քրոմատագրաֆ	18000
ԳՁՕ (Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմ)	Իրական ժամանակում ՊՇՌ	24000
Անասնաբուժասանիտարական փորձաքննություն /Մանրադիտակային հետազոտություն/	Մանրադիտակ Ֆիզիկաքիմիական	3000
Արտաքին տեսք Համ և հոտ Խտաստիճան Արյունաքամության աստիճան Ջլերի և ճարպի վիճակ Արգանակի բույր և թափանցիկություն, Ջգայորոշում,	Ջգայորոշում	3000

Թարմության որոշում		
--------------------	--	--

Պ ա տ վ ի թ ա տ ու

ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության
 պետական ծառայություն
 ք.Երևան, Կոմիտաս 49/2
 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
 ՀՀ 900011404026
 ՀՎՀՀ 00454227
 Իշխան Կարապետյան



Կ ա տ ա թ ո ղ

«Ստանդարտ դիալոգ» ՍՊԸ
 ք.Երևան, Կոմիտաս 49/4
 «Ինեկորանկ» ՓԲԸ
 ՀՀ 2052022118061001
 ՀՎՀՀ 00099876
 Արման Արարատյան



